Հուշագիր հեղինակին

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր (2 օրինակ) և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*», «*Arial LatArm*» (հայերեն) և «*Sylfaen*», «*Times New Roman*» (ռուսերեն, անգլերեն) տառատեսակներով, 11 տառաչափով (ֆոնտով):
2. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, ունենա լուսանցքներ, ձախից՝ 1.0սմ, աջից՝ 3.0սմ, վերևից ու ներքևից՝ 2.5սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր և ամփոփագիր: Ամփոփագիրը ներկայացվում է բնագրից տարբեր լեզուներով:
3. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝

   1. *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, М., 1986.
   2. *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, 2003, էջ 5:
   3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.
   4. http://www.oecd.org/dsti/sti, March 1, 2001.

4. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրական խորհուրդ